Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Սերը
Եսնամպարն է
Աստղերը մոտիկից դիտելու...

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ISBN 978-9939-78-250-8
9 789939 782508

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒՐԳԱՐՁԻ ԾԱՇԱՊԱՐԻՐԸ

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏՈՒՐԳԱՐՁԻ ԾԱՇԱՊԱՐԻՐԸ

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏՈՒՆԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԱՐՄԱՎԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 821.19-1 Բաղդասարյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Բ 242

Խմբագիր՝ Սլավի-Ավիկ Հարությունյան

Բաղդասարյան Ալիսա
Բ 242 Տունդարձի ճանապարհին: Բանաստեղծ. / Ա. Բաղդասարյան.- Եր.: Արմավ, 2022.- 160 էջ:

Ալիսա Բաղդասարյանի նոր ժողովածուն պատերազմից հետո տուն դարձող մարդու առճակատումն է իր նոր ճակատագրի հետ: Պատերազմից հետոյի ժամանակը գրքում կազմաքանդվում է, սկզբնավորում տունդարձի ճանապարհը: Հեղինակի գեղարվեստական մտածողությունը սերտորեն առնչվում է ժամանակի և տարածության կատեգորիաներին, որտեղ բացահայտվում է բանաստեղծական լեզվի նոր իմաստավորում, ընդգծվում է այդ լեզվական ձևերի ճշգրտությունն ու արտահայտչականությունը:

ՀՏԴ 821.19-1 Բաղդասարյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-78-250-8

© Բաղդասարյան Ալիսա, 2022
© Արմավ հրատարակչություն, 2022

ՎՇՏԻ, ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ՄԻՋԵՎ

Երբ փակում ես գրված գիրքը, հաջորդ բանաստեղծությունը, որ ծնվում է, այդ գրքի մաս չէ:

Տեքստային նմանատիպ տարանջատումն արտաքին շրջանակներով՝ պայմանական է, սակայն բառային հիմնական ֆոնդը ենթարկվում է իմաստային տեղաշարժի. առարկաներն ու հասկացությունները փոփոխվում են, կոմպոզիցիոն նոր հարաբերություններում տեղի է ունենում նաև գաղափարի, կոնցեպտի տեղաշարժ:

Եթե Ալիսա Բաղդասարյանի նախորդ՝ «Պատերազմից հետո» գրքում տարածության ու ժամանակի խրոնոտոպն Արցախյան 44-օրյա պատերազմն էր՝ պատերազմից հետոյի գեղարվեստական հնարքի կիրառումը հենց այդ պատերազմի ուղղակի նկարագրությամբ, ապա՝ նոր ժողովածուն պատերազմից հետո տուն դարձող մարդու առճակատումն է իր նոր ճակատագրի հետ:

Պարզվում է, որ այդ տունն ավերված է, վառված, կամ՝ ընդհանրապես արդեն չկա հայրենիքի այն մասը, որտեղ քո տունն էր. «Վախերի ստվերներով է // պատված ժամանակը»:

Պատերազմից հետոյի ժամանակն այս նոր գրքում կազմաքանդվում է, սկզբնավորում տունդարձի ճանապարհը:

Միխայիլ Բախտինի վկայությամբ՝ գրական-գեղարվեստական խրոնոտոպում ժամանակը խտանում, դառնում է գեղարվեստորեն տեսանելի, իսկ տարածությունը՝ ինտենսիվանում, ներգրավվում է ժամանակի սյուժեի, պատմության շարժման մեջ:

Այս առումով տունդարձի ժամանակը ստատիկ ու միանշանակ չէ. «Լույսի ծլնգոցներից, // Խեղդվում է տարածությունը»:

Հայրենի տուն վերադառնալու պատմությունները բոլոր ժամանակների հեղինակների սիրելի թեմաներն են՝ Հոմերոսից մինչև մեր օրեր: Նմանատիպ տեքստերում միշտ էլ հուզական ներուժ կա, քանզի նմանատիպ պատումներն ամենևին միատարր չեն:

Տուն վերադառնալը կարող է կապված լինել հույսի, ուրախության, կարոտախտի, կամ էլ՝ մերժումի հետ. «... և անտարբերությամբ առաջ ենք գնում, // քայլերն անհետք են, շարժը՝ անաղմուկ, // Անհանգիստ է օդը»:

Ամերիկացի գրող Թոմաս Վուլֆը նկատում է, որ մենք երբեք չենք կարողանում վերադառնալ տուն:

Անհիշելի ժամանակներից, երբ մարդն արտաքսվել էր դրախտից (առաջին տուն), նա ապրում է «հյուրանոցային» փոփոխվող վիճակում, ձգտում է վերադառնալ հայրենի տուն: Կարծիք կա, որ տուն դառնալու գաղափարը ոչ այնքան միֆական, որքան՝ արքետիպային է:

Հակոբի վերադարձն իր պատանեկության երկիր, Հովսեփի՝ իր ընտանիքի հետ վերամիավորման պատմությունը, երբ Եգիպտոսում, մահվան մահճում նա իր եղբայրներին հորդորում է երդվել, որ իր ոսկորները կտանեն Պաղեստին:

Նոր Կտակարանում տունդարձի ամենահետաքրքիր պատմությունը Հիսուսի վերադարձն է հայրենի Նազարեթ, որտեղ մարդիկ նրան ճանաչել են ընդամենը որպես ատաղձագործի և Մարիամի որդի:

Ալիսա Բաղդասարյանը, կամա, թե ակամա, իր գրքում անդրադառնում է Աստվածաշնչյան այս կոորդինատային թոփիքներին. «Անցյալը //պատռոտված լաթի պես // դարձել է ներկայի զգեստ»:

Հենց այստեղ էլ առճակատումն է, ինչպես ապրելու դիլեման, որովհետև «անտարբերությամբ // առաջ ենք գնում»:

Ալիսայի այս գիրքը յուրօրինակ ապրելու տարածք է, եթե ճշգրիտ, ապա՝ ապրելու համար պայքարի տարածություն: Նրա գեղարվեստական մտածողությունը սերտորեն առնչվում է ժամանակի և տարածության կատեգորիաներին, որտեղ բացահայտվում է հեղինակի բանաստեղծական լեզվի նոր իմաստավորում, ընդգծվում է այդ լեզվական ձևերի ճշգրտությունն ու արտահայտչականությունը:

Այլ կերպ ասած՝ լեզու - խոսք կապում նշանակյալը նշանակում է հենց այն, ինչ նշանակում է:

Նմանատիպ շարժում նկատելի էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1970-ական-

ների վերջին, «Մոսկովյան կոնցեպտուալիզմի» բանաստեղծների մոտ, երբ գաղափարը, կամ հայեցակարգն արվեստում ոչ պակաս կարևոր էր, որքան ավանդական գեղարվեստական միջոցներն են:

Զուգահեռաբար նշեմ, որ Ալիսա Բաղդասարյանի բանաստեղծական այս կոնցեպտը երկխոսության մեջ է այսօրվա իր սերնդակից ռուս և ուկրաինացի, մանավանդ՝ Դոնեցկի պոետների հետ: Ալիսան, այս առումով, ավելի հետաքրքիր փորձառություն է ներմուծում. կոնցեպտուալիզմի պոստուլատին բերում է ազգային բանաստեղծական գործընթացը՝ որպես շարունակականության փորձ. «Պատերազմից առաջ // սերը բացիկների ծաղկեփունջ էր»:

Հեղինակը, 44-օրյա պատերազմից հետո, իր փխրուն մարմնով մնացել է կանգնած այդ բացիկների ծաղկեփունջը ձեռքին՝ սիրո, վշտի և անհայտության միջև:

Սլավի - Ավիկ Հարությունյան

***

Ժամանակն
Անձրևի նման մաքրում է
Մեր հետքերը.
Ձայնը,
Շնչառությունը,
Ժպիտը,
Դիմագծերը գոլորշիանում են
Եվ բարձրանում երկինք.

Այնտեղ են նվիրական
երազանքները։

***

Սերը
Վարդագույն երազանքներով
Մտնում է քունս.
Հեքիաթը սկսվում է.

Լինում է, չի լինում...

***

Ամեն օր
Նա իր սերը նկարում է լուսամուտին
Եվ անձրևը՝
Մերկ աչքերի, մաքրում է սրտիկները.

Արդեն բոլոր եղանակներն էլ անձրևոտ են։

Նա ամենուր նկարում է ձեռքեր,
Բայց ձեռքերը գիրկ չեն դառնում,
Եվ ճչում է սերը։

Ամեն բառի մեջ
կարոտն է խնկարկվում.
Լուսամուտները արցունքոտվում են,
Սերը ճերմակ աղավնի է.
Ճախրում է երկնքում։

***

Աչքերդ գտան ինձ,
Հայացքս հանդիպեց քեզ.

Ժամանակը
Ձեռքի ափով փակեց
բերանը։

Երանությունը մեկնվել է
Թիթեռներով լցված
Ծաղկաբույր անտառում։

***

Հավատարմությունը
դարձրու ծաղիկ,
որի բույրն ամեն բացվող օրվա պես
հագեցնի շնչառությունս
և այտերս
վարդի թերթերի նման
կարմիրով ներկվեն…
Քո ներկայությանն
ինձ ընտելացրու,
որ բացակայությունդ
փշոտ ճյուղի պես
արյունոտի միտքս,
և ես այդ
կարմիրի մեջ
ճամփա նկարեմ:
Սպասումը
մերկապարանոց
Շտապում է ինձ մոտ,
Որ զարդարեմ նրա մարմինը:

***

Կարոտի շշուկները
Խլացնում են
Մտքիս ականջները.
Քեզ տեսնելու շշուկները
Հանդիպում են նկարում:

***

Վերադարձրու ինձ
և համոզիր,
Որ աստղերը
զարդարում են երկինքը
ինձ ու քեզ համար,
Որ արևն
Ամեն Աստծո օր
ժպիտ է նկարում
երկրի վրա,
որովհետև
մեր մտքերը ջերմանում են,
երբ անգամ չենք տեսնում իրար,
Համոզիր ինձ,
Որ երկրի պտույտն
իր առանցքի շուրջ
Պայմանավորված է
իմ ու քո միությամբ:

***

Կանացիությունը
ծորում է
Իմ՝ քեզ տեսնելու
ցանկությունից.
կին-տղամարդ հարաբերությունից
ծնված
նվիրումը
լողում է
ժամանակի ծովում:

***

Ափամերձ տարածքներում
Առավել շատ է զգացվում
ջրի շնչառությունը.

Աշխարհի բոլոր ծովերի ջրերն
իրենց ափերին
զգում են
Մեր ներկայությունը:

***

Երբ ունենք
մեր բռնելիք ձեռքը,
Ուրիշ ձեռքեր պետք
չեն լինում,
մաշկը,
ձևի հետ փաթաթված,
գուրգուրում է
զգացողությունդ,
և երկնքում
սավառնում են
սպիտակ աղավնիները։

***

Ես չգիտեի՝
Ինչ է տագնապը,
Դու եկար,
և անհանգստությամբ
լցրիր միտքս:

Ես չգիտեի՝
Ինչ է կարոտը,
Դու եկար
և կարոտով լցվեց օդը:

Գրկեցիր
և մինչ քեզ,
ու քեզնից հետո
տարածությունը
կոչեցի սպասում:

***

Դու իմ բանաստեղծությունն ես,
Իմ տողի շունչը,
Առանց քեզ՝
Բառերը խեղդվում են,
Թախծածոր տառերը
Նկարում են անունդ,
և տխրությունը
կերպարանք է ստանում:

***

Բառերը, շոյելով ձայնդ,
կարոտից սեղմեցին կոկորդս:
Հիշողությունս
գրկեց քեզ,
և հոդս ցնդեց
հեռավորությունը.
Խառնվեցիր էությանս:

***

Օրվա տխուր ժամերին
հրաժարվում եմ քեզանից,
և ամեն ինչից
մնում է ոչինչը:

Օրվա ուրախ ժամերին
իմ մտքերում հայտնաբերում եմ
քեզ,
և ոչնչից
ծնվում է ամեն ինչը:

Կյանքն իմաստավորվում է,
երբ խառնվում են
ոչինչն ու ամեն ինչը:

***

Երևակայությունս
Քո դեմքն է ստանում.

Ես հաղթահարում եմ
տխրությունը,
և տարածությունը
դառնում է տուն,
որտեղ հանդիպում ենք
ես ու դու.

Ջերմանում է օդը
Մեր զգացողություններից:

***

Քեզնից հեռու
Աշխարհն ունայն է,
Մահը՝ թշվառ,
Հետո-ն՝ դատարկ.

Եթե մոտ է վերջը,
Թո՛ղ քո շշուկներում
Մարի պահը։

***

Քո լռության աղաղակը
Փաթաթվել է ականջներիս,
Եվ գլուխս՝
Ափերիս մեջ հառաչում է.

Ո՞ւր ես,
Սիրելի՜ս։

***

Երազներս
Քո անվան տառերով
Կամար են կապել,
Եվ յոթգույնի մեջ
Ճեմում է քո համբույրը։

ՀԱՄԲՈՒՅՐ

Նրանք հանդիպեցին,
Եվ կարոտը լեզու առավ.
Անմոռաց ու
Անկրկնելի էր
նրա բառապաշարը։

Եվ հեքիաթներն
իրականություն դարձան.
Անսպասելին սպասված էր,
Հրաշքը՝ սովորական։

Շուրթերի
տոնակատարություն էր։

Նրանք հանդիպել էին,
Եվ ձեռքերն ավելորդ էին,
Եվ աչքերը՝ փակ։

***

Տաք սյուքի նման
Մտար իմ ներսը,
Եվ աշխարհը լցվեց
ջերմությամբ։

***

Սիրավեպերը
Թերթվում են անհերթ...

Իսկ ես լուռ եմ,
Դու լուռ ես։

Բառերը տխուր են
Առանց մեզ։

***

Սերը ծաղկազարդ գորգ է,
Որի վրա թավալվում են
սիրահարները.

Նրանց խոստովանություններից
Ծաղկաթերթերը բուրում են
Ավելի գեղեցիկ։

***

Ձեռքերդ
Հրաժեշտի դռներ են,
Որոնք բացվում են,
Որ մտնեմ ներս.

Բոլոր հրաժեշտները
Վերադարձի
Ակնկալիք ունեն.

Գրկիր ինձ։

***

Ես գալիս եմ սկզբից,
Դու գալիս ես վերջից.
Այդպես էլ չենք հանդիպում։

Ճանապարհը գայթակղություն է։

***

Հոգնած աչքերով ենք
իրար նայում։

Ժպիտները՝ ծռվել,
Ոչինչ չեն ասում,

Եվ ես արցունքներս
հազիվ եմ զսպում։

***

Եթե ես քո կողքին լինեի,
Ամեն ինչ կփոխվեր.

Առնվազն ես ու դու
կփոխվեինք։

***

Մեկ-մեկ
Այնքան շատ ես ասում՝
Սիրում եմ,
Որ երբեմն կասկածում եմ
Քո սիրո վրա.

Մտքերն անհոգի են։

***

Ամեն ինչի ընթացքը
Նույնն է,
Սկիզբն ու ավարտն են
Տարբեր։

Սկզբում
Ամեն պահի մեջ
Ավելանում են
Սերը,
Խանդը,
Կիրքը։

Հետո
Ամեն պահի հետ
Վերանում են
Սերը,
Խանդը,
Կիրքը։

***

Առանց քեզ՝
Թևերս անթռիչք են,
Ժպիտս՝ ծամածռություն։

Քեզ հետ՝
Իմ դեմքն արև է,
Ձեռքերս՝ երկնակամար։

***

Հեռուն ժպիտ ունի.
Աչքերիս մեջ դու ես։

Կյանքը երջանկություն է.
Սերը
Ծաղկում է
Երակներիս մեջ։

***

Դու իմ ծովն ես,

Ուզում եմ լող տալ՝
Մինչև հավերժություն։

***

Քո շշուկներից
Հավերժության բույրն եմ առնում,
Եվ գժվում են բառերը
Մեր համբույրներում.

Անկրկնելի է պահը։

***

Երբ ինքդ քեզ հետ ես՝
Ես քո կողքին եմ։
Երբ ինքդ քեզ հետ չես՝
Իմ կողքին ես։

Դու իմն ես
Քո բոլոր պահերի մեջ։

***

Քեզ հետ լինելու
Խելահեղությունը՝
Քոնը լինելու
Համարձակությունը չունի։

***

Քեզ վերընձյուղում են
մտքիս թելերը,
Եվ մեր ժպիտները
գրկախառնվում են.
Կարոտը
սպասումի կայանից
Տեղափոխվում է
Քո գիրկը։

***

Կարոտից
Ծանրանում են փողոցները.
Ժամանակը շնչահեղձ է լինում,
Այս ճանապարհները
Կլանել են սրտատրոփ շշուկները։

***

Վերադարձրո՛ւ ինձ
Քո նվիրած
Աստղաշատ երկինքը,
Որտեղ ամենալուսառատն
Իմ ժպիտն էր։
Լիալուսնի ամբողջությամբ
լցրո՛ւ
Մեր հանդիպումների
Աղմկարար լռությունը։

Հեռավորությունից
Սառնության հոտ է փչում։

***

Լիալուսնի
Շողերի տակ
Կընդունեմ քեզ
Իմ կյանք,
Եվ խոստովանությունների մեջ
Կթավալվի արևը։

***

Ամեն օր
Ես փախչում եմ
Ինքս ինձանից,
Որ մոտ լինեմ քեզ։

Վարդաթփերի մեջ
Կորցնում եմ ինձ,
Որ պոկածդ վարդերն
Իմ բույրն ունենան։
Հրաժեշտ եմ տալիս,
Քարերը
Ոտքերիս տակից գնում են.
Հողն այլևս հենարան չէ։

***

Գրկիր ինձ,
Որ զգամ՝ ապրում եմ,
Երակներիս մեջ
Արյան կաթիլները
Քո շունչն են զգում։

Հիշողությամբ
Պարուրվում եմ գրկիդ մեջ.
Կարգավորվում է
Արյանս հոսքը.

Կյանքը
քո պատկերն է նկարում։

***

Ես զգում եմ,
Թե ինչպես ես
Երևակայությանդ մեջ
համբուրում ինձ.
մենք ծուլվում ենք իրար՝
Գովերգելով մեր սերը։

***

Սերը թևում է
Ծիծաղախիտ ժպիտը դեմքին։
Արևը
Լուսնի մեջ կրակներ է նկարում.
Երակների մեջ
Եռում է կյանքի ավյունը։

***

Առանց քեզ՝
Ոչինչ են երկնքի աստղերը,
Չնչին ու խամրած է լուսինը,
Սառն ու անժպիտ՝ արևը։

Առանց քեզ՝
Երազանքները
Մոլորված թռչուններ են։

***

Անգամ
Ամենաշքեղ ծաղիկը թոշնում
Եվ հայտնվում է աղբամանում.
Ժամանակին
Սիրո չհամտեսած պահը
Կրկնվելու հատկություն չունի։

***

Անվերջանալի երկար է
Սկիզբը.

Ցասումը
Կնոջ կերպարանք ունի։
Ես-ի փակագծերում
Այնքան շատ են փակուղիները,
Որ ուրիշ ես-եր
Չեն տեղավորվում։

Անվերջանալի երկար է
Ավարտը։

***

Ինչ-որ մեկը ինձ է նայում,
Ինչ-որ մեկին դու ես նայում,
Ինչ-որ մեկը քեզ է նայում,
Ինչ-որ մեկին ես եմ նայում.
Եվ սկսում կատարսիսը։

***

Պարզապես գրկիր ինձ,
Եվ աշխարհին
Այլևս չի տխրի,
Ծառերն
Այլևս չորացած տերևներ
Չեն ունենա,
Անձրևները
Ռոմանտիկ ելևէջներ կդառնան,
Եվ կհնչեն
Արևի շնչառության տակ,

Լուսինն ու աստղերը
Քո շնչառության միջով
Կտեղափոխվեն հոգուս մեջ։

***

Գայլը լուսինը գրկած
Ոռնում է գիշերներում,
Լուսնի մեջ աղջիկը
Արցունքներից
Ուլունք է սարքում։

***

Եթե լինեիր կողքիս,
Ամեն լուսաբաց
Արևը
Դեմքս կողողեր ժպիտներով,

Բառերը երգեր կդառնային,
Քայլերս՝ պարի շարժումներ։

Եթե դու կողքիս լինեիր,
Աշխարհը մի կողմ չէր քաշվի,

Ցավի հետ մենակ չեմ լինի,
Չեմ խխունջվի ցավի մեջ,
Չեր խխունջվի ցավն իմ մեջ։

Եթե կողքիդ լինեի,
Աշխարհը մեր մեջ կլցվեր,
Եվ օդը չէր ուշաթափվի։

***

Համեմատության եզրագծում
Բախվեցին
Սերն ու սկզբունքները.
Եվ հաղթանակեցիր դու։

***

Եթե ուզում ես ասել՝
Սիրում եմ,
Պարզապես լռիր,
Եվ միտքդ ճանապարհի կնկարի,
Ոտքերդ՝ արարքներ։

Բառերը
Կորցրել են իրենց նախնական
Իմաստը։

Եթե ուզում ես ասել՝
Իսկ ի՞նչ է սերը,
Պարզապես
Անցիր նկարած ճանապարհը,
Եվ արարքները կպատասխանեն։

Բառերը
Հաճախ սավառնում են օդում,
Եվ երբեմն
Անհաջող թռիչք են ունենում։

***

Երեկ ես ու դու կռվեցինք,
Եվ մեր մենամարտից
Կարմրեց երկինքը,
Երկնքի կարմիրը
փոխանցվեց մեր դեմքերին,

Իրարից կիլոմետրեր հեռու
Մեր խռովքն ու կարոտը
Բոցավառեցին
Հիշողության սևագրերը։

***

Մտքերս
Ծաղիկներ են նկարել.
Ալ կարմիր վարդերից գեղեցիկ.

Միայն ալ կարմիր վարդերն են.
Քո մասին
Ամեն ինչ փուշ է.

Մտքերս կարմիր են։

***

Ես մտածում եմ քո մասին
Օրվա բոլոր ժամերին՝
Երբ լուսաբացը շոյում է կոպերս,
Եվ աչքերս ճամփա են ընկնում։
Երբ ճանապարհը
Վարդերով դիմավորում է ինձ,
Եվ վարդերի բույրից
Մերկանում է շնչառությունս։
Երբ մութն իր գորովալից
Ձեռքերով
Փակում է կոպերս,
Եվ վաղվա երազանքներով
Այցելում քունս։

Ես մտածում եմ քո մասին,
Եվ վաղվա օրվա մեջ բացվում է
Գարունը։

***

Կոպերիս վրա ծվարել են
Աչքերդ,
Լեզվիցս թռած քո անունը
Ննջում է շուրթերիս վրա,
Ձեռքերս
Շոշափում են
Քեզնով ներծծված հուշերը.
Կանաչ դաշտերում
Հասունանում են հասկերը։

***

Դու լռում ես,
Եվ բառերը հերթ են կանգնում.
Միտքը ձաղկում է,
Եվ պարում է մարմինը,
Շշուկները գուրգուրում են.
Եվ սնվում է սերը
Հոգու քղանցքներում։

***

Լռությունից ծնված
Աղմուկի մեջ
Քո շշուկները գրկած
Ամեն օր սպասում եմ քեզ.

Կգա՞ս։

Միտքս շարունակ
Կատարելագործում է
Քեզնով պարուրված հուշերս։

Սպասե՞մ։

Լույսի ծլնգոցներից
Խեղդվում է տարածությունը։

***

Վերադարձրու ինձ,
որ չկորցնենք
ավելի լավը լինելու հնարավորությունը.
երբ ժպիտն իր դեմքն է գտնում,
և անկեղծությունը վերադառնում է տուն:

Ես կվերադարձնեմ քեզ,
Որ հեքիաթները
Իրականության գրկում ապրելու
Հնարավորություն ունենան,
Երբ հույսը
Չի հանգցնում իր ներսի լույսը,
Եվ հետոն ճառագում է անհամբերությունից:
Վերադարձրու մեզ,
Որ սիրո գոյությունը
Չընդունող ջահելները
Համոզեն,
Որ սերը
Ամենաշոշափելի զգացողությունն է.
Զգացմունքները խրախճանքի մեջ են:

***

Նիրվանայի մեջ հայտնված
Երևակայությունս
Հանդիպում է քեզ
Եվ ամենահամարձակ
Կտավն է նկարում։

***

Մարմինը
լսում է
Մատների ձայնը,
Ձգում
Տաք ներկայությունը,

Եվ մոռանում
Իրենից դուրս աշխարհը։

***

Քայլերիս մեջ
Տեսնում եմ
Հայացքիդ ներկայությունը։

Ցանկություններդ
Փոխանցվում են ինձ.
Ներկայությունդ շոյում է
Արյանս պարունակությունը։

***

Երբ կարոտում եմ քեզ,
Եվ հիշողության շտեմարանը
չի բավարարում
Հասնել քեզ,
Դիմում եմ փախուստի.
Հազար ու մի պատճառ
Կարելի է գտնել
Քեզնից հրաժարվելու համար,
Բայց պատճառներն
անզոր
ծալվում են սիրո ոտքերի տակ.
Եվ ես զանգում եմ քեզ:

***

Դողը
Դանդաղ քայլերով
Մտել է
Մտքի խորքերը,
Այնքան շատ է,
Որ, աշակերտի
անփույթ ձեռագրի նման,
Հատել է լուսանցքը.

Մտքերի
Ներսն ու դուրսը
Սիրով են լիքը։

***

Ասում ես՝
Բառերով չեմ կարող
Ցույց տալ իմ զգացածը.
Եվ հայացքդ
Նկարում է
Ամենապատկերավոր
Խոստովանությունը,
Ձեռքերդ գունազարդում
ԵՒ շնչավորում են այն:

Զգացմունքների տարափից
Խամրում են բառերը,
Եվ ավելորդ են դառնում
Բառարանները:

***

Սերը,
Որ շնչում են
Մեր օրերը,
Օդի պես
Լցնում է
Մեզ բաժանող
Տարածությունը,
Եվ արև է նկարում
Մեր մտքերի
Երկնքում։

***

Ծաղկամանը՝
Երկար դատարկ մնալուց,
Ընկավ,
Ջարդվեց.

Արտասվում են
Քո չնվիրած ծաղիկները։

***

Եվ զգացմունքները՝
Անզուսպ ու անսանձ,

Հույս ավետեցին։

***

Սերը ծորում է մատներից,
Եվ հանդիպումը
գիրկ է դառնում.
Գգվանքները
Լող են տալիս
կյանքի երակներում։

***

Սերը
Ճանապարհ է
Չհասնումի,
Գտնումի
Եվ ապրումի։

Սերը
Վերադարձ է
Կորուստների,
Մոռացումների...

Մանկության։

Սերը
Կանգառ է՝
Կյանքն ափի մեջ զգալու
Ճանապարհին։

Սերը
Ճանապարհ է՝
Աստղերը մոտիկից դիտելու։

***

Պատերազմից առաջ
Սերը
Բացիկների մեջ
գունազարդ ծաղկեփունջ էր։
Պատերազմում
Կարմրեցին
Ջահելների ծոցագրպանները։

Պատերազմից հետո
Կարմիր չեն հագնում աղջիկները։

***

Սա իմ Արցախն է,
այլևս ո՛չ այն չափերով,
որ եղել է
2020 թվականի
44-օրյա պատերազմից առաջ,
և ո՛չ այն չափերով,
որ կլինի
44-օրյա պատերազմից տարիներ հետո.

Երկրիս ապագան
եղբոր անունը կրող տղայի
մատնաչափ բռունցքի մեջ է։

***

Գնդացիրների ոռնոցների մեջ
Մարել են հույսի ծվենները.
Մոմերն անշունչ պառկել են:
Մանկան աչքերի լույսի շողերում
Ծնրադիր
Աղոթում են մայրերը:

Յուրաքանչյուրիս բազուկի մեջ
Ընկածների ոգին է.
Անմահ են ժամանակները:

***

Ամեն օր
Ժամանակը հանգցնում է
Մեր ներսում վառվող շողերից
Մի քանիսը.

Մայրամուտը
Արևաածագից շուտ է գալիս.

Թե իմանայի՞ն
Արևի գրկում լող տվող տղերքը:

***

Ապրողները
Որբացած հայացքները
Երկնքին են հառել
Եվ Աստված են կանչում։

Այս պատերազմում
Ողջ մնացածները
Մեղավորության բեռի տակ
Մարում են։

Իսկ լուսանկարների մեջ
Նրանք են՝
Առավել կենդանի,
Քան ապրողները։

***

Պատերազմը շարունակվում է.
Ձահել կինը գիտակցեց,
Որ շուտով բոլորը կգնան
Եվ ինքը կմնա
Չորս պատի արանքում՝
Մեն-մենակ.
Հոգու պատերն ավելի նեղ են:

Տարիքն առած կինը,
Թոռանը տուն ճանապարհելիս
Զգաց,
Որ բաժանումն անխուսափելի է,
Եվ նրա հայացքը
Կախվեց անցյալից,
Իսկ ներկան անշոշափելի է.
Որդին երկնքից է նայում:

Պատերազմը
Որդի պես կրծեց
Որդու ինքնազգացողությունը.
Ուսին հայրական ձեռք չկա,
Ծնկելը սովորակա՞ն է:

***

Բոլոր ճանապարհները
Տուն են տանում.
Բոլոր տները
Հասցեներ ունեն։

Աղավնիները
Միայն խաղաղության մասին են երգում
Անտուն։

Պատահական չէ
Նոյի աղավնականչը։

***

Մանկան նման
Կառչել ենք
հայրենիքի փեշից
և չենք գիտակցում,
Որ մեծացել ենք,
Եվ փեշի տակ թաքնվելու
Փոխարեն պետք է
Այդ փեշը մեր մարմնով պաշտպանենք։

***

Հենակներով քայլող զինվորը
Պայուսակներն
Արմունկներին ամրացրած է
տանում,
Տեսողությունից զրկված
Երիտասարդը
Ուրիշների աչքերով է նայում
Զուգընկերուհուն։
Ծնունդները
Նշվում են հիշողության
արցունքներով։

Հայրենասիրությունը
Պաստառվել է
Հայրենիքիս փողոցներում։

***

Պատերազմը վերջացավ.
Ողջերը կարծես վերադարձան:

Հետպատերազմյան ճգնաժամից
ծռված ժամանակի մեջքը
զգալիորեն ուղղվեց,
սակայն դեմքը
չափազանց աղավաղված է.
Դառնությունն
առաջին հացի նման
սմքաչոր կպել է մարդու դեմքին:

***

Օրերը հրաժեշտ են տալիս
Հիշողություն դարձնելով
ներկան.

Մեր հողում
Քայլերն այլևս հետքեր չեն
թողնում,
Շշուկն արձագանքում
և կորչում է անդարձ:

Բարձրաձայն խոսելը
Սովորական է.
Երկրագունդն ականջների
ցավից
Տանջում է բնակչությանը:

Նորից տունդարձի
ճանապարհին ենք:

***

Սա քո պատերազմը չէր,
Քո բաժին երկինքը պատռվել
և մահը ճանկել է քեզ՝
առանց որևէ հաշվարկի:

Սա քո պատերազմը չէր,
Սպասում ես որդուդ
վերադարձին,
Բայց վերադարձի
ճանապարհները
փակ են:

***

Պատերազմից հետո
Սկսված պատերազմը
Ջնջեց հիշողությունը,
Սպանեց հավատը,
Աղավաղեց մարդկային
դիմագիծը.

Ամեն ինչ խեղաթյուրվեց...

Հայացքներին
Դրոշմված ժպիտները
Կեղեքված էին.
Ատելությունն էր նրանց
աստվածը,
Վրեժը՝ ուղղենշան.

Մահը չափազանց անմեղ է՝
Ապրելու մեղքի դիմաց:

***

Պատերազմը
Գոհունակության
Ճիչեր է արձակում,
Որովհետև մեզնից
և ոչ մեկը
իր մեջ չհաղթահարեց
ուրիշներին մեղադրելու
վատ սովորությունը:

Մեզնից և ոչ մեկը
Իր խղճի աչքերին չնայեց.

Զբաղված ենք մեր դիմացինի
Աչքաբիբերի մազանոթներն
Ուսումնասիրելով:

Պարտությունը
Թևերը բացել
և մեզ առել է
իր սրածայր ափի մեջ:

***

Աստված ամեն օր
Հայացքն ուղղում է դեպի մեզ,
Նայում է մտամոլոր,
Ձեռքով շոյում մորուքը,
Ժպտում,
Հետո շարունակում է իր ճանապարհը։

***

Արցախը
Սիրելու համար
Բառախաղն
Այլևս ավելորդ է,

Պետք է զինվել։

Ժամանակի պահանջը
Ձենքի հետ
Ձենքով խոսելն է,

Այլապես՝
Ամեն լուսաբաց
Այսուհետ կլինի
Արյունով լցված։

***

Հայրենիքը
Խոսքով պահել
Արդեն անհնար է։

Սերը
Ցանկացած պահի
Ապացուցման կարիք ունի։
Մահը,
Անկախ տարիքից,
Բոլորին էլ հյուրընկալելու
Սովորություն ունի.

Ապահովության
Երաշխիք չկա
այս երկրում։

***

Երկիրս
Քամու բերանն ընկած
Տերև է,
Որի դեղնության մեջ
Ժանգոտում են
Անցյալի փառքերը։

***

Յուրաքանչյուրս
Մահապարտ ենք
Արցախում։

Ձենքը պետք է լինի
Կարևոր գործիք։

Կին, թե պատանի
Պետք է զենքի լեզուն
յուրացնի։

1915 թվականը
Վերապրելու վտանգը
Նորից չոքել է
հայի դռանը։

***

Լինում է,
Որ պիտի տուն գնաս,
Բայց քայլերդ
Քեզ ուրիշ տեղ են տանում։

Քո տան պատերը
Խեղդում են քեզ։

Իսկ եկեղեցում
Մոմավառություն է.

Անօգուտ։

***

Նորից կրճատվում է
Երկրիս քարտեզը,
Մի բուռ էր,
Հիմա բռունցք է դառել։

Հայի հագուստն
Իր դրոշն է,
Ինչքան արյունոտվում,
Այնքան ձուլվում է մարմնին։

***

Երկրիս արյունատար երակները
բաց են.
Հողի յուրաքանչյուր թիզ
Անուն ու դեմք ունի...

Օրվա 24-ժամյա պահապանները
Մայրեր են, հայրեր,
քույրեր, եղբայրներ, կանայք, զավակներ...

Մի ողջ ազգ՝ սգակիր,
Գլորում է ժամանակի քարը։

***

Քաղաքիս սրտում նկարներ են,
Որոնց տերերը
Օրվա բոլոր ժամերին
պատմում են պատերազմի
սարսափների մասին.

Քաղաքս
Խեղդվում է արցունքի ծովում՝
Շուրթերին աղոթք ու կսկիծ:

***

Գերեզմանոցները
տուն են դարձել
Ողջերի համար.

Սկսված պատերազմն
Ավելի ծանր է:

***

Ճանապարհները
Ընթացքն են նկարում,
Իսկ քայլերն անում են
Ոտքերը։

Մարդը ճանապարհը գրկած
Մոտենում է իր տանը։

***

Ղարաբաղում
Գիշերները
Քրքրում են
Մարդկանց մտքերը.

Անքնությունը
Մտել է բոլորի տները։

***

Երկինքն ամպել է:

Հիշողությունը ծվարել է
Չծնված մանկան հայացքում:

Մանուկը ծնվում է՝
Արցունքներում
Հիշողության բեռը:

Անհույս են բառերը:

***

Ժամանակը
Քաշքշում է հիշողությանը.
Պատերազմը
Ջնջեց մի քանի սերնդի դիմանկար։
Տարիները
Ավազահատիկների նման
Գլորվում են արյան գնդիկների մեջ.
Արյունահոսում է
Պատմության վիրավոր սիրտը։

***

Օդում
Բախվում են սպասումները.
Հողը ծանրանում է
Արյան կաթիլներից։

***

Զոհված տղաների
Անուններով
Երեխաներ կծնվեն։

Խորշոմների մեջ կորած
Որդեկորույս ծնողների
Սպասված հանդիպումը
Վերջապես կկայանա։

Հայրենիքում
Նոր սահմաններ կգծվեն՝
Ըստ անհրաժեշտության։

Երկրի փողոցները
Արցունքաջրերից կթացանան,
Սակայն գլխատված
ծաղիկներն
Այլևս չեն կենդանանա։

***

Երեկ
Արյամբ
Հայրենիք նկարեցինք,
Այսօր
Ապրելով պիտի
Կենդանություն տանք
Այդ նկարին.

«Արյունը ջուր չի դառնում»։

***

Չարը
Շատ խորն է տեղավորվել
Մեր ներսում.
Ինչ-որ կտրուկ բան կլինի,
Վերակազմավորումն
Անխուսափելի է։
Պատերազմները,
Ջրհեղեղները,
Կրակներն ու
Կլիմայական անոմալ
Երևույթները
Սերմանում են
Այսօրվա հանդեպ անորոշություն,
Խլում՝ վաղվա հանդեպ հույսը։
Պահով ապրելն էլ
Վտանգավոր է։

***

Արցախն այն երկիրն է,
որի յուրաքանչյուր բնակիչ
քնում և արթնանում է
«Հայր մեր»-ը շուրթերին,
Իսկ նրա բանաստեղծը համոզված է,
որ Աստված էլ է ղարաբաղցի:

Արցախն այն երկիրն է,
որի դժբախտությունների ծանրակշիռ մասն
Իր չճանաչված լինելու պատճառով է,
Իսկ նրա բանաստեղծը
Հայտարարում է՝
Երանություն է
չճանաչված երկրի քաղաքացի,
առավել ևս բանաստեղծ լինելը:

Արցախն իմ երկիրն է,
որտեղ
ինձպես հազարավոր
հայուհիներ,
մահն աչքերի առաջ,
շարունակում են ապրել
և լույս աշխարհի բերել
Արու զավակներ:

***

Ճանապարհները
բախվում են իրար,
Քարերը երկինք են բարձրանում,
Ամպերը լցվել են փողոցները.
Գույները խառնվել են իրար։

Ժամանակն ավլում է փողոցները.
Այլևս վերադարձ չկա։

***

Պատերազմը

Ծիծաղի
Կապույտ հագուստի վրա

Կարմիր գնդիկներ
Նկարեց։

***

Պատերազմից հետո
կորուստներից թմրած
հիշողության մարմինը
փլվել է
ծանր վիրավոր քաղաքի
կիսաքանդ փողոցներում.
դժվարամարս մտքերը
կանգ են առել
քաղաքի կոկորդում,

օդը սևաթույր, կարմրածոր
թափվում է
երկնքից.

Անցի՛ր ժամանակ։

Քաղաքի դեմքը
Ձոհերի դիմագծերով է
ամբողջանում։

***

Արցախի վարսերը կտրեցին,
ներկեցին,
խոպոպներն
սանրեցին ուղիղ
և շիկահեր դարձրին։

Արցախը նորաձև է.
ձևական ժպիտի տակ
արցունքների ծով է։

***

Տունը կորցրած
անտուն մարդը
քաղաքի ասֆալտի վրա
իր մանկության քարերն է փնտրում։

գտածը՝
հուշերի ծանր կծիկն է,
որ ծնկաչոք է անում
կյանքի թելը կորցրած
մարդուն։

ՇՈՒՇԻ

Քեզ խլեցին մեզնից.

Կրակեցին ուղիղ սրտիդ.
Ղազանչեցոցն է՛լ չկա։

Խողխողեցին մարմինդ բաց.
Հայի հողը
Հայի ոտքին կարոտ մնաց։

Սակայն
Երկրեերկինք ձգվող
Աղոթքներում
Քո տաք գիրկը
Վայելելու
Հույսն է վառվում։

Պատերազմը
Քեզ խլեց մեզնից։
Մի օր
Սակայն
Թափված արյան շշուկներից
Երկինքն ի վեր
Հասկեր են բարձրանալու։

***

Պատերազմից հետո երբեմն
Անկողնուց անկողին են տանում
Մինչ այդ հավատարմությամբ աչքի ընկնող
կանանց։

Քաղաքը կեղտոտվել է
անզգացմունք կրքերից.

Սերը թավալվում է փողոցներում։

***

Պատերազմը
Կործանելու սովորությունը չհաղթահարեց,
Չսովորեց աստվածաշնչյան
հանդուրժողականությունը,

Յոթ մահացու մեղքերն
Ի կատար է ածում
Ամենայն մանրամասնությամբ։

Անկենդան է անգամ
Կենդանի մնացած մարդը։

***

Նորից պատերազմը
Սև ամպի նման
Ծանրացել է երկրիս վրա։

Անսպասելի չէր,
Բայց մենք անակնկալի եկանք,
Ինչպես 2020 թվականին։

Վախը,
Ինչպես յոթգլխանի վիշապ,
Կանգնեց մեր գլխավերևում,

Բայց մենք համառորեն՝
Երես առած երեխայի նման,
Մեր լեռների կողքին
Ծանր քարի անշարժությամբ

Մնում ենք կանգնած։

***

Արցախում
Լուսաբացը սկսվում է
Պատերազմի դեմքով,
Մթնշաղը՝ խաղաղության երազանքով։

Վախերի ստվերներով է
Պատված ժամանակը։

***

Հայացքներն արյունոտվում են
Հիշողության ժպիտներից.
Գիրկը դատարկությունից
Ծնկաչոք ողբում է.
Մահվան ուրվականը
Ծածկել է ամեն ինչ:

Սիրտն իր ամեն զարկի հետ
Հրաժեշտ է տալիս:

***

Բանաստեղծությունը ծվարել է
մանկան հայացքում.
Արտասվալից են
աչքերը նրա:

***

Ժամանակն
Անվերադարձ խլում է
Մանկան հիշողության բջիջը.
Տարածությունը
Հոր դեմքը
կամաց-կամաց աղոտացրել
և վերջակետ է դրել
գրկախառնությանը:
Հոր և Որդու տարածությունը
Սուրբ հոգու Երրորդությունն է
ջերմացնում:

***

Կարոտը մեխվել է
Ժամանակի դեմքին։
Օրվա բոլոր ժամերի
Արդարացումները
Կախվում են օդից։
Ոչինչ հավերժ չէ.
Հարցականներն
Անձրևի կաթիլների հետ
Հատ-հատ
Ընկնում են հողի մեջ,

Եվ սերմերն այդպես էլ
Չեն ծլարձակում։

***

Մտքեր չկան.
Ձեռքերս անզոր են մտածել։

Բոլորս
դարձի ճանապարհներ ենք
փնտրում,
Սակայն վերադարձի համար
Ճանապարհներ չկան։

Ժամանակի հետ
Միայն
Մեր երգերը
Ավելի են մերը դառնում։

***

Օրերի ցավից
Մեռնում է ժամանակը,
Ժամանակի մեջ՝
Մեզանից մի անկրկնելի
պահ-պատկեր.

Մենք կրկնում ենք,
Բայց չենք կրկնվում։

***

Հիասթափության
բոլոր երանգները
միտքս դարձնում են
ծաղրանկար.

Բարեկամական
բոլոր կապերը
խամրում են,
և, ճչալու անզորությունից,
փակվում են
հոգուս պատուհանները:

***

Բոլոր պահերը՝
Ապրված
Կամ ապրելու մտադրությամբ
Տոգորված,
Աշխարհից խլում են
ինչ-որ բան.

Ընկնում են աստղերը.
Երկինքը դատարկվում է։

***

Անտարբերություն
Խաղալու համար՝
Այո-ն ոչ է դառնում,
Ճիշտը՝ սխալ,
Սխալը՝ ճիշտ.

Ամեն ինչ խառնվում է իրար...

Սերը քնած է փողոցում,
Պարտականությունն է
Մտնում անկողին։

***

Ցանկացած քայլ կարող է
Վճռորոշ լինել,
Ոտքս դնելիս
Վերհիշում եմ անցյալը,
Նայում ներկային։

Սրտիս յուրաքանչյուր
Զարկի մեջ
Բաբախում է ժամանակը.

Լինել-չլինելու խնդիր է։

***

Դու խլեցիր ինձնից
Իմ ժպիտը։

Հավատս,
Որ բոլորը նույնը չեն՝
Ի դեմս քեզ,
Հագավ կոշիկներն
Ու գնաց։

***

Թախիծը
Սարսափելի թարմ է։

Երջանկության վրա
Փոշի է նստել։

***

Անտարբերությունը
Քմծիծաղը դեմքին
Արժեզրկում է կյանքը։

Սերը
Աշխարհից փախել է։

***

Պարտականությունը
Անկողին է մտցնում
Ամուսիններին.

Անզգացմունք սեր։

Անկողնային
Խաժամուժից հետո՝
Լուռ աղմուկի մեջ
Ծվարում է
Խեղճուկրակ արդարացումը.

Հիասթափված սեր։

***

Վախը
Մեզնից խլում է
Ազատ գործելու
Հնարավորությունը։

Մեր ինքնությունը
Կորցնում է դեմքը,
Մնում է աղավաղված դիմակը,
Որից սարսափում է
հենց նրա տերը։

***

Ոչ մի փոխհարաբերություն
Չպետք է դառնա
Պարտադրանք.
Ձևականության շղարշի տակ
Քրքրվում է
Անգամ ծնող-զավակ կապը։

***

Բացարձակ դժվար էր
Քեզնից հեռանալը,
Հիմա էլ՝
Չափազանց դժվար է
Քեզ մոտենալը։

***

Դժվարանում ենք ապրել.
Հետ ենք նայում՝ ամեն ինչ
հետո-ի համար էր,
Կանգնած տեղում՝
Ներկա պահի իշխանությունն է,
Առաջ չենք նայում՝ անհայտ է.
Այս իրավիճակում
Երկիր ենք պահում։

Մահը սովորական է,
Գերեզմանոցը՝ օջախատեղ։

***

Մանկությունը
Թաքնվել է նկուղի
Ամենախուլ անկյունում,
Եվ փակել ականջները,
Ծերության վերարկուն
Փաթաթել է
Նրա դողացող մարմինը.

Տարիները ճոճվում են
Կիսամութի մեջ։

***

Սուտը
Ցանցառ դիմագծերով
Հիվանդության նման
Տարածվում է
Հոգու բոլոր գաղտնարաններով,
Եվ անհնարին է դառնում
Ճշմարտության դեմքը գտնել։

Որոնումները
Մոլորվում են
Շահի ոլորապտույտներում։

Հարցական նշանը
Մոտակա ժամանակներում
Դուրս է գալու գործածությունից.

Ամեն ինչ պարզ է,
Եվ անհասկանալի։

***

Սպիտակ թղթի վրա եմ լցնում
Մտքիս հյութերը,
Եվ սևագրության մեջ է մնում
Ապրումներիս
Չմշակված հումքը.

Բոլոր մաքրագրություններում
Արհեստական ընդհատված
Սաղմեր կան։

***

Իրողությունները
Բարձրաձայնում են
Մարդկային թուլությունների մասին։
Հանգամանքները
Մարդուն դեմ են տալիս պատին,
Եվ մարդն ինքնաոչնչանում է.
Կյանքի քրքիջը
Խլացնում է աշխարհի ականջները։

***

Քո դասական մտածելակերպից
Օտարված ժամանակը
Վնգստում է,
Եվ ոտաբոբիկ,
Մերկ մարմնի
Մի քանի տեղը
Ծածկելով տերևներով՝
Շտապում է որսի.
Նորը
Լավ մոռացված հինն է։

***

Սպասումը
Կրնկակոխ հետևում է.
Մարդը
Ծվարել է նրա մեջ,
Եվ տխուր է։

***

Մտքերը
Քարուքանդ են անում
Հիշողության լուսանցքները,
Եվ ժամանակը
Ծանրանում է
Դիմագծերն աղավաղող
Խորշոմների վրա։

Տարիները գլորվում են։

***

Հիշողությունը
Թփթփացնում է
Բառի ուսը,
Եվ բառերը շրջան են կազմում,
Ներսի աթոռակին
Նստած մարդը
Խոժոռ հայացքով է նայում.

Ժամանակը հավաքում է
Ջահելության բջիջները։

***

Խոսելը դարձել է անհրաժեշտություն.
Չխոսելն անդունդ է ստեղծում.
Անդունդի մեջ հայտնվում է
Համբերությունը։

Ամեն մի չասվող բառի հետ
Մարում է կրակը,
Եվ խռովքից ծնվում է
Անտարբերություն.
Ժամանակն ավլում,
Թափում է
Հնարավոր երջանկությունը.

Քամու աղմուկը
Չճաշակած զգացմունքների
Ափսոսանքն է։

***

Հեռավորության մեջ
Փրկվեց երազը։

***

Շտապելիս
Ժամացույցի սլաքները
Կանգ են առնում։
Վնգստոցները
դառնում են պահանջմունք,
Ոռնում են մտքերը.
Շարժն անշարժ է։
Հետքերն
Օդի պակասից խեղդվում են։

Հաղթանակի ծաղիկը
դարձել է սգո զարդ։

***

Անցյալը,
պատռոտված լաթի պես,
Դարձրել ենք ներկայի զգեստ,
և անտարբերությամբ
առաջ ենք գնում.
Քայլերն անհետք են,
Շարժը՝ անաղմուկ.
Անհանգիստ է օդը:

Քեզնից հեռու՝
Սպասելիքները վնգստոցներ են:

***

Մաքրագրելու ժամանակ չկա.
Ամեն ինչ հանպատրաստից է.
Աստիճանները վերև են տանում.
Բարձունքներն
Արդեն
Գլխապտույտներ չեն առաջացնում,
Անկումները սովորեցնում են։

Օրերն
Իրար հետևից
Ցած են գլորվում։

Եվ ո՞ւր է ապրելու
Ժամանակը։

***

Բառերն անհասկանալի քայլերով
տանում են մեզ,
Տառերը շտապում են
և ձուլվում իրար,
Թեև ամեն ինչ մեր մասին է,
Բայց մենք մեր ներսով
անցնելու փոխարեն
Շրջանցում ենք մեզ,
Եվ սպասումը կախվում է երկնքից.

Կապույտը սպառված գույներից մեկն է։

***

Սուտը դարձել է առօրյայի
անբաժանելի մաս։

Հայացքները թափառումների մեջ են.
ով ում գտավ՝
ժամանակավոր
անփոխարինելի է։

Սիրո խոստովանությունները
Դարձել են բաժակաճառեր։

***

Ձեռքերս գրկում են,
Իսկ միտքս բաց է թողնում.

Մտքերիս գիրկը դատարկ է։

***

Փակված դռների բանալիները
Ժամանակի ձեռքում
խաղալիք են.

մարդը կանգնած ճամփաբաժնում
տունդարձի ճանապարհին է
սպասում։

***

Կարոտը
հեռուն տեսնելու
ճշգրիտ ճանապարհ է.
զգացմունքը դեմք է ունենում,
դիմակներն անզորությունից
ընկնում են,
և խորշոմների տակ
բաբախում է սիրտը:

Կարոտը
զգացմունքների տարափում
գտնվելու կամ կորչելու
ուղիղ ճանապարհ է,
կա՞նգ առ, շո՞ւնչ քաշիր,
և զգա թոքերիդ ներսում
եռացող արյան շարժը:

Բոլոր ճանապարհները
Տուն են տանում.
Երբ բաց են հոգու դռները:

***

Վերադարձրու ինձ.
Քո վերադարձով է
պայմանավորված
Խաղաղությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՇՏԻ, ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ՄԻՋԵՎ 3
Սլավի - Ավիկ Հարությունյան

Ժամանակն 7
Սերը 8
Ամեն օր 9
Աչքերդ գտան ինձ 10
Հավատարմությունը 11
Կարոտի շշուկները 12
Վերադարձրու ինձ 13
Կանացիությունը 14
Ափամերձ տարածքներում 15
Երբ ունենք 16
Ես չգիտեի 17
Դու իմ բանաստեղծությունն ես 18
Բառերը, շոյելով ձայնդ 19
Օրվա տխուր ժամերին 20
Երևակայությունս 21
Քեզնից հեռու 22
Քո լռության աղաղակը 23
Երազներս 24
ՀԱՄԲՈՒՅՐ 25
Տաք սյուքի նման 26
Սիրավեպերը 27
Սերը ծաղկազարդ գորգ է 28
Ձեռքերդ 29
Ես գալիս եմ սկզբից 30
Հոգնած աչքերով ենք 31
Եթե ես քո կողքին լինեի 32
Մեկ-մեկ 33
Ամեն ինչի ընթացքը 34
Առանց քեզ 35
Հեռուն ժպիտ ունի 36
Դու իմ ծովն ես 37
Քո շշուկներից 38
Երբ ինքդ քեզ հետ ես 39

Քեզ հետ լինելու 40
Քեզ վերընձյուղում են 41
Կարոտից 42
Վերադարձրո՛ւ ինձ 43
Լիալուսնի 44
Ամեն օր 45
Գրկիր ինձ 46
Ես զգում եմ 47
Սերը թևում է 48
Առանց քեզ 49
Անգամ 50
Անվերջանալի երկար է 51
Ինչ-որ մեկը ինձ է նայում 52
Պարզապես գրկիր ինձ 53
Գայլը լուսինը գրկած 54
Եթե լինեիր կողքիս 55
Համեմատության եզրագծում 56
Եթե ուզում ես ասել 57
Երեկ ես ու դու կռվեցինք 58
Մտքերս 59
Ես մտածում եմ քո մասին 60
Կոպերիս վրա ծվարել են 61
Դու լռում ես 62
Լռությունից ծնված 63
Վերադարձրու ինձ 64
Նիրվանայի մեջ հայտնված 65
Մարմինը 66
Քայլերիս մեջ 67
Երբ կարոտում եմ քեզ 68
Դողը 69
Ասում ես 70
Սերը 71
Ծաղկամանը 72
Եվ զգացմունքները 73
Սերը ծորում է մատներից 74
Սերը 75
Պատերազմից առաջ 76
Սա իմ Արցախն է 77
Գնդացիրների ոռնոցների մեջ 78

Ամեն օր 79
Ապրողները 80
Պատերազմը շարունակվում է 81
Բոլոր ճանապարհները 82
Մանկան նման 83
Հենակներով քայլող զինվորը 84
Պատերազմը վերջացավ 85
Օրերը հրաժեշտ են տալիս 86
Սա քո պատերազմը չէր 87
Պատերազմից հետո 88
Պատերազմը 89
Աստված ամեն օր 90
Արցախը 91
Հայրենիքը 92
Երկիրս 93
Յուրաքանչյուրս 94
Լինում է 95
Նորից կրճատվում է 96
Երկրիս արյունատար երակները 97
Քաղաքիս սրտում նկարներ են 98
Գերեզմանոցները 99
Ճանապարհները 100
Ղարաբաղում 101
Երկինքն ամպել է 102
Ժամանակը 103
Օդում 104
Զոհված տղաների 105
Երեկ 106
Չարը 107
Արցախն այն երկիրն է 108
Ճանապարհները 109
Պատերազմը 110
Պատերազմից հետո 111
Արցախի վարսերը կտրեցին 112
Տունը կորցրած 113
ՇՈՒՇԻ 114
Պատերազմից հետո երբեմն 115
Պատերազմը 116
Նորից պատերազմը 117

Արցախում 118
Հայացքներն արյունոտվում են 119
Բանաստեղծությունը ծվարել է 120
Ժամանակն 121
Կարոտը մեխվել է 122
Մտքեր չկան 123
Օրերի ցավից 124
Հիասթափության 125
Բոլոր պահերը 126
Անտարբերություն 127
Ցանկացած քայլ կարող է 128
Դու խլեցիր ինձնից 129
Թախիծը 130
Անտարբերությունը 131
Պարտականությունը 132
Վախը 133
Ոչ մի փոխհարաբերություն 134
Բացարձակ դժվար էր 135
Դժվարանում ենք ապրել 136
Մանկությունը 137
Սուտը 138
Սպիտակ թղթի վրա եմ լցնում 139
Իրողությունները 140
Քո դասական մտածելակերպից 141
Սպասումը 142
Մտքերը 143
Հիշողությունը 144
Խոսելը դարձել է անհրաժեշտություն 145
Հեռավորության մեջ 146
Շտապելիս 147
Անցյալը 148
Մաքրագրելու ժամանակ չկա 149
Բառերն անհասկանալի քայլերով 150
Սուտը դարձել է առօրյայի 151
Ձեռքերս գրկում են 152
Փակված դռների բանալիները 153
Կարոտը 154
Վերադարձրու ինձ 155

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏՈՒՆԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Բանաստեղծություններ

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Հրատ խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արշալույս Արզումանյանի

Շապիկի նկարը՝ Անրի դը Թուլուզի

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ 80 գ.
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 10,0 տպ. մամուլ
Գինը՝ պայմանագրային

ARMAV PUBLISHING-HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4 հարկ
հեռ.՝ +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com

Yerevan, st. Bahgramyan 3, 4 floor
tel: +374-99373130
Email: armav1815@gmail.com